ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը զբաղեցված պաշտոնը

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարար Ժաննա Անդրեասյան

2. Գործուղման վայրը և ժամկետները

Հունաստանի Հանրապետություն (Աթենք)

2025 թվականի հուլիսի 21-23-ը

3. Հրավիրող կողմը

- Հունաստանի Հանրապետության մշակույթի նախարար Ստիլիանի (Լինա) Մենդոնի:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Երկկողմ հանդիպումների ձևաչափով քննարկել կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում Հունաստանի Հանրապետության հետ համագործակցության զարգացման հնարավորությունները:

5. Քննարկված թեմաները

- Բենակի թանգարանի և Հայաստանի պատմության թանգարանի հետ համագործակցության, մասնավորապես՝ համատեղ գորգերի ցուցադրություն կազմակերպում:

- Լասկարիդիս հիմնադրամ այցի ընթացքում երկկողմ հարաբերությունների զարգացման, միջթանգարանային կապերի ամրապնդման, մասնավորապես՝ Հայաստանի պատմության թանգարանի և «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հետ ակտիվ համագործակցության հնարավորությունների քննարկում:

- 2025 թ. սեպտեմբերի 21-ին Ակրոպոլիսի թանգարանի ղեկավարության հետ պայմանավորվածության ձեռք բերում՝ Հայաստանի Հանրապետություն հրավիրելու համար:

- Ազգային հնագիտական թանգարանի հետ պայմանավորվածության ձեռք բերում՝ Հայաստանում ցուցահանդես կազմակերպելու վերաբերյալ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի շրջանակում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի գլխավորած պատվիրակությունը (այսուհետ՝ Պատվիրակություն) Բենակի թանգարանի ակադեմիական տնօրեն Ջորջ Մանգինիսի ուղեկցությամբ շրջել է թանգարանում, ծանոթացել հաստատության գործունեությանը և բացառիկ ցուցադրությանը: Թանգարանի տնօրենը ներկայացրել է հնագույն ժամանակների ցուցանմուշները, որոնց մեջ առկա են նաև հայկական ծագմամբ խեցեղեն ցուցանմուշներ:

Հաջորդաբար այցելել է Լասկարիդիս հիմնադրամ, որտեղ գլխավոր տնօրեն Կոստանդինոս Մազարակիսի ուղեկցությամբ ծանոթացել է այնտեղ պահվող հնագույն հունական ձեռագրերին: Ներկայացնելով հին ձեռագրատան գործունեությունը՝ տնօրենը նշել է, որ հաստատությունում նաև հայկական հնագույն ձեռագրեր են պահպանվում:

Պատվիրակությունը այցելել է նաև Աթենքի ազգային և կապոդիստրական համալսարան, որտեղ հանդիպել է համալսարանի պրոռեկտոր Էվսթաթիոս Էվսթաթափուլուլոսի հետ: Շնորհակալություն հայտնելով Պատվիրակությանը այցելության համար՝ պրոռեկտորը ներկայացրել է համալսարանի գործունեությունը՝ շեշտելով, որ իրենք հետաքրքրված են Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցությամբ:

Ներկայացրել եմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համակարգում ընթացող բարեփոխումները՝ մասնավորապես անդրադառնալով «Ակադեմիական քաղաք» ծրագրին, իսկ նա ընդգծեց, որ միջազգային համագործակցության ընդլայնումը ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտի զարգացման հիմնական ուղղություններից է:

Ծանոթանալով Աթենքի ազգային և կապոդիստրական համալսարանի կրթական ծրագրերին՝ նշել եմ, որ նմանատիպ ֆակուլտետներ են գործում նաև Երևանի պետական համալսարանում: Երկու համալսարանների երկկողմ համագործակցության շրջանակում կարող են միջբուհական ծրագրեր իրականացվել, մասնավորապես՝ աստվածաբանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև այլ ուղղություններով:

Կարևորել եմ գործընկերային կապերի զարգացումը ԵՄ Erasmus Plus ծրագրի շրջանակում, մասնավորապես՝ ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերի և համատեղ այլ նախաձեռնությունների իրականացմամբ:

Պատվիրակությունը Ակրոպոլիսի թանգարանի տնօրեն Նիկոլայոս Ստամպոլիդիսի ուղեկցությամբ շրջել է թանգարանում, ծանոթացել ցուցադրությանը:

Շնորհակալություն եմ հայտնել ընդունելության համար՝ կարևորելով թանգարանային ոլորտում երկկողմ համագործակցությունը, հատկապես՝ հելլենիզմի և վաղքրիստոնեական շրջանի վերաբերյալ Հայաստանի պատմության թանգարանի հետ համատեղ ծրագրերի իրականացումը:

Ընդգծել եմ, որ Հայաստանի պատմության թանգարանն արդեն իսկ միջազգային հեղինակավոր թանգարանների հետ համագործակցության և համատեղ ցուցադրությունների կազմակերպման հաջող փորձառություն ունի: Մասնավորապես՝ Բրիտանական թանգարանի հետ համագործակցությամբ «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» խորագրով ցուցադրության շրջանակում Հայաստանի պատմության թանգարանում ավելի քան 6 ամիս ցուցադրվել են Անահիտ աստվածուհու բրոնզե արձանից պահպանված կիսանդրին և ձեռքը՝ Հայաստանի պատմության թանգարանի ցուցանմուշների հետ համադրմամբ: Առաջիկայում համատեղ ցուցադրություններ են նախատեսվում աշխարհի այլ հեղինակավոր թանգարանների հետ:

Հաջորդաբար Պատվիրակությունը այցելել է Ազգային հնագիտական թանգարան: Թանգարանի տնօրեն Կոստաս Նիկոլեդոսը ներկայացրել է Հունաստանի առաջատար թանգարանների փորձը, ցուցադրությունների կազմակերպման նորարարական լուծումները, թվայնացման ծրագրերը:

Նշել եմ, որ Հունաստանի թանգարաններն ունեն բացառիկ փորձ և համաշխարհային ճանաչում, որը կարող է օգտակար լինել Հայաստանի թանգարանների զարգացման և արդիականացման համար:

Քննարկվել են թանգարանային մասնագետների համար վերապատրաստման ծրագրերի իրականացման, ցուցադրությունների վիրտուալ հասանելիության և թվային տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ փորձի փոխանակման հնարավորությունները:

Պատվիրակությունը այցելել է նաև Ստավրոս Նիարխոս հիմնադրամ, որտեղ հանդիպել է հիմնադրամի գլխավոր տնօրեն Դիմիտրիս Պրոտոպսալտուի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկել ենք կրթության և մշակույթի ոլորտներում հնարավոր համագործակցության ուղղությունները, փորձի փոխանակման ծրագրերը և փոխշահավետ նախաձեռնությունների իրականացումը:

Ընդգծել եմ հիմնադրամի երկարամյա ներդրումները մշակութային և կրթական նախագծերում՝ նշելով, որ հայաստանյան կողմը պատրաստ է ուսումնասիրել փոխգործակցության տարբերակները, որոնք կարող են նպաստել ոլորտային զարգացումներին:

Այցի շրջանակում ներկայացվել է նաև Ստավրոս Նիարխոս հիմնադրամի Մշակույթի կենտրոնի (SNFCC-Stavros Niarchos Foundation Cultural Center) գործունեությունը: Դիմիտրիս Պրոտոպսալտուն ներկայացրել է հիմնադրամի ընթացիկ ծրագրերը և հնարավորությունները՝ ընդգծելով հայկական կողմի հետ համատեղ ծրագրերի իրականացման պատրաստակամությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հունաստանի ազգային պատկերասրահում հանդիպել եմ Հունաստանի Հանրապետության մշակույթի նախարար Լինա Մենդոնիին հետ, որի ընթացքում ստորագրվել են մշակույթի ոլորտում համագործակցության հուշագրեր:

Շնորհակալություն եմ հայտնել Հունաստանի մշակույթի նախարարին ջերմ ընդունելության համար՝ ընդգծելով, որ Հայաստանի և Հունաստանի միջև ձևավորված բարեկամական հարաբերությունները և պատմական ընդհանրություններն ամուր հիմք են՝ երկու երկրների համագործակցությունը հատկապես մշակույթի ոլորտում ամրապնդելու և ընդլայնելու համար:

Հունաստանի մշակույթի նախարարին եմ ներկայացրել մշակույթի ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները՝ կարևորելով համատեղ ծրագրերի իրականացումը տարբեր ուղղություններով:

Ընդգծել ենք, որ երկու երկրների միջև փոխշահավետ համագործակցության զարգացման մեծ ներուժ կա՝ պատրաստակամություն հայտնելով ընդլայնելու երկկողմ կապերը համատեղ ծրագրերի միջոցով:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մշակույթի ոլորտում փոխանակման ծրագրերի, միջթանգարանային համագործակցության, երկու երկրներում մշակույթի օրերի կազմակերպման, համատեղ ցուցահանդեսների և ֆիլմարտադրության նախագծերի, մշակութային ժառանգության պահպանման, կառավարման ոլորտում փորձի փոխանակման վերաբերյալ հարցեր:

Հանդիպմանը հաջորդել է մշակույթի ոլորտում համագործակցության վերաբերյալ փաստաթղթերի ստորագրումը: Մասնավորապես՝ ստորագրվել է հինգ փաստաթուղթ՝

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային արժեքների հափշտակումը, անօրինական պեղումները և ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը կանխելու և դրանք իրենց ծագման երկիր ռեստիտուցիայի մասին» համաձայնագիր։
2. «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հունաստանի Հանրապետության մշակույթի նախարարության մշակույթի ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր։
3. «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ պետական ոչ առևտրային կազմակերպության և Սալոնիկի համերգային դահլիճի միջև» համագործակցության հուշագիր։
4. «Հայաստանի կինոյի հիմնադրամի և Ստեղծարար Հունաստան՝ Հունաստանի կինոյի և աուդիովիզուալ կենտրոնի միջև» համագործակցության հուշագիր։
5. «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հունաստանի Հանրապետության կրթության, կրոնական գործերի և սպորտի նախարարության միջև կրթության և գիտության բնագավառներում 2025-2029 թվականների համար» ծրագիր։

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Լինա Մենդոնիին վստահություն եմ հայտնել, որ ստորագրված փաստաթղթերը նոր շունչ կհաղորդեն Հայաստան-Հունաստան մշակութային կապերի ամրապնդմանը և կբացեն համագործակցության նոր հորիզոններ։

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարար
Ժաննա Անդրեասյան

7/28/2025

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

28.07.2025 թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՎՈ 601-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Ժաննա Անդրեասյան՝ նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Հունաստանի Հանրապետություն /Աթենք/

5. Գործուղման ժամկետները՝ 2025թ. հուլիսի 21-23-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ գիշերակացի ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն
որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

026987

Ծախսի տեսակը		Ժաննա Անդրեասյան			Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը	Է.կոնոմ դաս			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	***444694***			***444.694***
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (եվրո)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (եվրո)	61			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	27404			27.404
	Օրերի քանակը	3			
	Ընդամենը (դրամ)	***82213***			***82.213***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Այլ ծախսեր (.....)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***526.907***			***526.907***

Ծանոթություն: Նախնական վճարվել է 615859 << դրամ, ենթակա է վճարման 0 << դրամ:

Արտարժույթի միջին փոխարժեքն առ 14.07.2025թ.
1 եվրո = 449.25 դրամ

ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝
/պարտականությունները կատարող/ ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ